Հավելված N 7
ՀՀ կառավարության 2026 թվականի
մարտի 26-ի N 383 - Ն որոշման

ԶԲՈՍԱՎԱՐՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Ըստ մասնագիտացման ուղղությունների զբոսավարները դասակարգվում են՝

1) համապետական.

2) լոկալ.

2. Համապետական զբոսավարները կարող են զբոսավարի գործունեություն իրականացնել Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

3. Լոկալ զբոսավարները կարող են զբոսավարի գործունեություն իրականացնել միայն Հայաստանի Հանրապետության այն վարչատարածքային միավորների վարչական շրջանակներում, որոնք լրացվել են որպես զբոսավարի թեկնածու դիմելու պահին սույն որոշմամբ սահմանված Հավելված 17-ով նախատեսված դիմումով:

4. Սույն հավելվածի 1-ին կետով նախատեսված մասնագիտական ուղղությունների զբոսավարները կարող են բնական միջավայրում իրենց ծառայությունների մեջ ներառել քայլարշավային երթուղիներ, եթե մասնակցել են սույն որոշմամբ հաստատված Հավելված 3-ի 1-ին կետի 20-րդ ենթակետով սահմանված թեմայով վերապատրաստման դասընթացին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

30.03.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ